# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

«ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/17 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 25 | «ՕՐԱՆԺ ԳՐՈՒՊ» | «ՕՐԱՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | Վերարկուն գունաքողարկված գույնի, ջրակայուն, կիսաբամբակյա կտորից է: Կտորի երանգը համաձայնեցվում է Գնորդի հետ: Կտորի բաղադրությունը՝ 50-52% բամբակ, 48-50% պոլիէստեր, կտորի խտությունը՝ 220-240 գրամ մ2: Վերարկուն կազմված է լանջափեշերից, թիկնամասից, թևքերից և մորթե հանովի օձիքից: Վերարկուի առաջամասը, թիկունքը և թևերն ամբողջությամբ մշակվում են սինթեպոնով, որը մգդակված է աստառի հետ շեղանկյուն (փախլավաձև) հյուսքով: Վերարկուն կոճկվում է կափույրով ծածկվող շղթայով: Լանջափեշերի վրա՝ վերևից ուղղահայաց վրադիր գրպաններ: Գրպանների կափույրները կոճկվում են կպչունակներով: Կողային գրպանները՝ շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Օձիքը՝ ծալովի: Ուսադիրների շրջանում՝ կպչունակով ամրակներ: Առջևի ձախ գրպանի վերևի մասում ասեղնագործվում են «ՔԿԾ» տառերը: Ընդհանուր քանակի 15%-ի գոտկատեղի հատվածում՝ ճարմանդով գոտի: Վերարկուի հետ տրվում են նաև ուսադիրները՝ 20 % ավել քանակով: Հանովի ուսադիրներն ուղղանկյուն են, զուգահեռ կողմերով, երկարությունը 90 մմ է, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | լայնությունը՝ 50-52 մմ, ստորին և վերին եզրերը 2,5 մմ լայնությամբ մուգ կանաչ գույնի ասեղնագործված: Ուսադիրները պատրաստվում են վերարկուի կտորից: Տեխնիկական բնութագրի ընդհանուր պայմանները և հանդերձանքի նկարները ներկայացված են կից՝ հավելված 1-ում: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО АМА ПРОДАКШН в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/17 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 25 | | | |